ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

№_____ «_____»_____2022 թ.

Երևանի քաղաքապետ
Հրաչյա Սարգսյանին

Հարգելի պարոն Սարգսյան.

ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին քաղաքացի Շուշան Դոյդոյանի դիմումում բարձրացված հարցերի պարզաբանման համար խնդրում եմ տրամադրել՝ ք"Երևան, Աջափնյակ վարչական շրջանի, Սիլիկյան թաղամաս 60/1 հասցեի հարևանությամբ ինքնակամ կառուցված և շահագործվող քարի արտադրամասի վերաբերյալ Ձեր կողմից ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկատվություն:

Տեղեկացնում եմ, որ դիմումատուի կողմից Տեսչական մարմնին տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, որ Երևանի քաղաքապետարանի կողմից միջնորդություն էր ներկայացվել ՀՀ վարչական դատարան կիրառված հայցի ապահովումը վերացնելու մասին, ուստի խնդրում եմ ներկայացնել տեղեկատվություն նաև վերոգրյալի մասին և վարչական վարույթի ավարտից հետո Ձեր կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ միջնորդությունը բավարարելու պարագայում, անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ շահագործումը դադարեցնելու և ինքնակամ կառույցի հետևանքները վերացնելու ուղղությամբ:

Համապատասխան միջոցներ չձեռնարկելու պարագայում, Տեսչական մարմնի կողմից իրեն վերապահված լիազորությունների սահմաններում հիմք ընդունելով «Վարչական

0054, Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8,
էլ. փոստ՝ utfsib@utfsib.gov.am, հեռ.՝ (+374 60) 86 66 60

իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 157.17-րդ հոդվածով նախատեսված դրույթները, համայնքի ղեկավարի նկատմամբ կկիրառի վարչական պատասխանատվության միջոց:

Հարգանքով՝

X

ԳԵՂԱՄ ՇԱԽԲԱԶՅԱՆ

Կատարող՝ ՔՏՀԱՏՄ-ի քաղաքաշինության գործունեության վերահսկողության վարչության
ՆՏՓՎ բաժնի գլխավոր մասնագետ Դ. Հովհաննիսյան հեռ. (+374 60) 86 66 66 ներքին 1067

0054, Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8,
էլ. փոստ՝ utfsib@utfsib.gov.am, հեռ.՝ (+374 60) 86 66 60